



The statements and analysis contained herein are the work conducted in the frames of the American Bar Association's Rule of Law Initiative. The statements and analysis expressed are solely those of the authors, and have not been approved by the House of Delegates or the Board of Governors of the American Bar Association and do not represent the position or policy of the American Bar Association. Furthermore, nothing in this report is to be considered rendering legal advice for specific cases. This study is made possible by the generous support of the American people through the United States Agency for International Development (USAID). The contents are the responsibility of the American Bar Association's Rule of Law Initiative and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.

Սույն դիտարկումները և վերլուծությունները հանդիսանում են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության« Իրավունքի գերակայության նախաձեռնություն ծրագրի սահմաններում իրականացված աշխատանք: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Ամերիկյան իրավաբանների ընկերակցության պատվիրակների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և՛ չեն ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները: Ի լրումն, սույն զեկույցի որևէ մաս չպետք է ընկալել որպես առանձին գործերի առնչությամբ տրամադրվող իրավական խորհրդատվություն: Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի առատաձեռն օժանդակության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության միջոցով: Նյութի բովանդակության համար պատասխանատու է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության« Իրավունքի գերակայության նախաձեռնություն ծրագիրը: Նյութի բովանդակությունը կարող է չհամընկնել ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

Երևան, 2015թ.



ABA ROLI հայաստանյան ներկայացուցչությունը շնորհակալություն է հայտնում փաստաբան Հայկ Ալումյանին և ABA ROLI հայաստանյան ներկայացուցչության աշխատակիցներին սույն ուղեցույցը նախապատրաստելու համար:

ԴԱՏԱԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Նախարան.

Մույն ձեռնարկի նպատակն է՝ ներկայացնել քրեական դատավարության ոլորտի պրակտիկ իրավաբաններ պատրաստելիս ուսումնական դատավարություններ անցկացնելու՝ հեղինակների փորձը: Ձեռնարկը կարող է օգտակար լինել ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետներում, ՀՀ արդարադատության ակադեմիայում, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանական դպրոցում իրականացվելիք պրակտիկ ուսուցումներում օգտագործելու համար:

Ձեռնարկն իր մեջ ներառում է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության կողմից տարիներ շարունակ Հայաստանում, գործող փաստաբանների և ուսանողների մասնակցությամբ, կազմակերպված դատախազերի փորձը:

Ինչ հմտություններ է տալիս դատախազը.

Դատախազը հնարավորություն է տալիս ուսանողներին իրականին հնարավորինս մոտ պայմաններում կիրառել մինչ այդ ստացած տեսական գիտելիքները, ամրապնդել այդ գիտելիքները, դատախազի ընթացքում ձեռք բերել նոր գիտելիքներ, ինչպես նաև՝ փորձ: Վկաների, փորձագետների հարցաքննության, միջնորդություններ ներկայացնելու, դատական վիճաբանություններին մասնակցելու փորձը, նախքան պրակտիկ աշխատանքի անցնելը, կարելի է ձեռք բերել միայն այսպես՝ դատախազերի միջոցով:

Մրցույթի ձևաչափը, որը բնորոշ է դատախազին, դրդում է անձին՝ հաղթանակի հասնելու համար առավելագույնս կիրառել իր գիտելիքները, ձեռք բերել նոր գիտելիքներ, սովորել իր մրցակիցներից և

դատախաղի մյուս մասնակիցներից: Սա, ըստ էության, փորձի և գիտելիքների ինտերակտիվ ինտենսիվ փոխանակում է:

Դատախաղը հնարավորություն է տալիս մասնակիցներին խորությամբ հասկանալ դատավարության հոգեբանությունը, սովորել ճիշտ կառուցել փոխհարաբերությունները մեղադրյալի, տուժողի, մեղադրողի, դատարանի, վկաների և փորձագետների հետ:

Դատախաղը կարող է օգնել ուսանողներին (ունկնդիրներին) աստիճանաբար ընտելանալ նաև քրեական դատավարության նոր օրենսգրքում նախատեսվող նորամուծություններին. բացման խոսքին, նոր խափանման միջոցներին, ապացույցների թույլատրելիության նոր չափանիշներին, ցուցմունքների դեպոնացմանը և այլնի:

Դատախաղը կարող է օգտագործվել նաև այն նպատակով, որպեսզի մասնակիցների մոտ պատկերացում ստեղծվի Հայաստանում դեռևս չգործող դատավարական ինստիտուտների, օրինակ՝ երդվյալ ատենակալների դատարանի մասին:

Ինչպես ընտրել գործ դատախաղի համար.

Ամեն ինչ կախված կլինի նրանից, թե հատկապես ի՞նչ հմտություններ եք որոշել զարգացնել տվյալ դատախաղի միջոցով: Այսպես.

Ա. Դուք կարող եք ընտրել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդության քննությունը դատարանում: Այդ դեպքում ձեզ անհրաժեշտ կլինի նախապատրաստել համապատասխան նյութեր, որոնք սովորաբար ներկայացվում են քննիչի կողմից դատարան. քննիչի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու (կամ՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու) մասին, ինչպես նաև՝ սովորաբար այդպիսի միջնորդություններին կցվող փաստաթղթերը. քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին որոշում, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրյալի հարցաքննությունների արձանագրությունները, մի քանի նյութեր, որոնցով քննիչը փորձում է հիմնավորել «ողջամիտ կասկածի» առկայությունը:

Այսպիսի դատախաղը օգտակար կլինի՝ կալանավորման հետ կապված՝ ներպետական օրենսդրության, Վճռաբեկ դատարանի որոշումների, ինչպես նաև՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի ու ՄԻԵԴ վճիռների իմացությունը զարգացնելու և դրանց պրակտիկ կիրառման հմտություններ ձեռք բերելու համար:

«Պաշտպանական կողմին» կարող է առաջադրանք տրվել՝ քննիչի միջնորդության դեմ առարկություններ նախապատրաստելուց և ներկայացնելուց բացի պատրաստել ու ներկայացնել գրավ կիրառելու մասին միջնորդություն:

Հավելված 1-ում բերված է այդպիսի մի միջնորդության օրինակ, որի հիման վրա կարելի է կազմակերպել դատախաղ: Դատախաղի կազմակերպիչները կարող են փոփոխություններ մտցնել

միջնորդության մեջ, հեշտացնելով կամ բարդացնելով իրավիճակը, ինքնուրույն որոշել, թե ինչ նյութեր է կցված լինելու քննիչի այդ միջնորդությանը և մեղադրյալի անձը բնութագրող ինչ հանգամանքներ մտցնել գործի մեջ:

Բ. Կարելի է ընտրել դատական քննության փուլում գտնվող այնպիսի գործ, որտեղ մեղադրյալը չի ընդունում իրեն վերագրվող գործողությունները: Օրինակ, պնդում է, որ ինքն առհասարակ որևէ առնչություն չունի դեպքին, սակայն գործում կան ինչպես նրա առնչությունը հաստատող, այնպես էլ՝ հերքող ապացույցներ:

Այսպիսի դատախաղի ելքը կախված է լինելու բազմաթիվ ապացույցներից: Ուստի, կողմերը պետք է կարողանան հմտորեն հարցաքննել վկաներին, փորձագետներին, պաշտպանական կողմը պետք է կարողանա ճիշտ ընտրել ռազմավարությունն ու մարտավարությունը, լավ նախապատրաստել մեղադրյալի ցուցմունքը:

Հավելված 2-ում բերված է այդպիսի մի իրավիճակ՝ դատախաղ կազմակերպելու համար: Դատախաղի կազմակերպիչներն այս դեպքում ևս կարող են որոշակի փոփոխություններ մտցնել ամբաստանյալի, տուժողի և վկաների ցուցմունքների մեջ, որպեսզի հեշտացնեն կամ դժվարացնեն պաշտպանական կամ մեղադրանքի կողմի դերը, կամ՝ ելնելով մասնակիցների պատրաստվածության աստիճանից, առհասարակ ավելի հեշտացնեն կամ բարդացնեն ողջ գործը:

Գ. Վերջապես, կարելի է նախընտրել այնպիսի գործ, որտեղ փաստերը համեմատաբար հեշտ են պարզվում, սակայն վիճարկելի է մնում այդ փաստերին տրված քրեաիրավական որակումը:

Այդպիսի դատախաղը կարող է օգտակար լինել՝ մասնակիցների մոտ վերլուծական ունակությունները զարգացնելու, քրեական իրավունքի ոլորտի գիտելիքները խորացնելու, ինչպես նաև՝ բանավիճելու հմտություններ ձևավորելու առումով:

Հավելված 3-ում բերված է այս նպատակին համապատասխանող գործի մի օրինակ: Գործը հետաքրքիր է նաև նրանով, որ այն հնարավորություն կտա անցկացնել բավականին հազեցած դատաքննության փուլ, իսկ դատական վիճաբանությունների ընթացքում, բացի ապացույցների ճիշտ վերլուծությունից, կպահանջի քրեական իրավունքի խոր իմացություն և իր տեսակետը ներկայացնելու ունակություններ: Այս գործով դատախաղ անցկացնելիս կազմակերպիչները կարող են իրենք որոշել վկաների նախաքննական ցուցմունքների բովանդակությունները, դրանց մեջ մտցնելով որոշակի հակասություններ:

Ընդհանուր առմամբ, դատախաղի համար գործ ընտրելիս, պետք է ձգտել, որպեսզի գործի ելքը լինի ոչ միանշանակ և գործի փաստերը կառուցված լինեն այնպիսի ձևով, որպեսզի կողմերից որևէ մեկն ի սկզբանե չունենա զգալի առավելություն: Բացի այդ, ցանկալի է նախընտրել այնպիսի գործ, որտեղ առավել մեծ լինի մասնակիցների (ուսանողների, ունկնդիրների) ներգրավվածությունը, այսինքն՝ լինի տուժող, լինեն վկաներ, փորձագետներ, մասնագետներ, որպեսզի ապահովվի բոլոր ցանկացողների

ներգրավածությունը: Ցանկալի է նաև, որ գործը վերցված լինի իրական դատական պրակտիկայից կամ լինի այդ գործերին շատ մոտ, որպեսզի վերջում հնարավոր լինի համեմատել դատախաղի և իրական գործի վերջնական արդյունքները, ինչպես նաև՝ իրական գործի ընթացքում մասնակիցների գործողությունները հնարավոր լինի համեմատել դատախաղի մասնակիցների գործողությունների հետ:

Ինչպես բաշխել դերերը դատախաղի մասնակիցների միջև.

Մասնակիցները պետք է հստակ իմանան, որ՝ ցանկացած դերում հանդես գալը դա գերազանց փորձառություն է: Սովորաբար մասնակիցները ի սկզբանե գերադասում են հանդես գալ այն դերերում, որոնց իրենք նախանշել են իրենց համար՝ որպես հետագա մասնագիտություն. փաստաբան դառնալու մտադրություն ունեցող մասնակիցները նախընտրելու են պաշտպանի դերը, դատախազ դառնալ ցանկացողները՝ մեղադրողի: Իհարկե, կարելի է դերերը բաշխել հենց այդ սկզբունքով, սակայն պետք է նկատել, որ ապագա փաստաբանների համար շատ լավ փորձառություն կլինեն դատախաղի ընթացքում հանդես գալ հենց դատախազի (մեղադրողի) դերում և հակառակը:

Ինչ վերաբերվում է դատավորին, ապա, իհարկե, դատախաղի ժամանակ դատավորի դերում հանդես գալը գերազանց փորձառություն է ցանկացած ունկնդրի (ուսանողի) համար, քանի որ նախ՝ ստիպում է լավ ուսումնասիրեն քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները և երկրորդ՝ հնարավորություն է տալիս նայել դատավարությանը դատավորի աչքերով և նկատել պաշտպանական և մեղադրանքի կողմի թույլ տված շատ թերություններ, որոնք նրանք պարզապես չեն նկատում: Այդպիսի դերում գտնվածը հետագայում, հանդես գալով որպես մեղադրող կամ պաշտպան, այս կամ այն միջնորդությունը անելիս կամ փաստարկը ներկայացնելիս, շատ հաճախ է անդրադառնում «դատավորի» իր փորձին: Սակայն, ունկնդրին (ուսանողին) դատավորի դեր տալը կարող է խառնաշփոթ առաջացնել դատախաղի ողջ ընթացքում, քանի որ անփորձ «դատավորը», որպես կանոն, չի կարողանում ճիշտ կառավարել դատավարությունը և հաճախ թույլ է տալիս կոպիտ սխալներ, որոնք լրջորեն նվազեցնում են դատախաղի որակը և նշանակությունը: Այդ իսկ պատճառով, գերադասելի է դատավորի կարգավիճակում ներգրավել կամ պրոֆեսիոնալ դատավորի, կամ մեծ աշխատանքային փորձ ունեցող փաստաբանի (դատախազի) կամ էլ՝ Արդարադատության ակադեմիայի ունկնդրի:

Սակայն, եթե դատախաղը անց է կացվում երդվյալների մասնակցությամբ, ապա այդ կարգավիճակում գտնվելը ունկնդիրների (ուսանողների) համար անգնահատելի փորձ կարող է լինել: Առանձին կերպով արժե անդրադառնալ ամբաստանյալի, տուժողի և վկաների դերերը ստանձնած մասնակիցներին: Շատ հաճախ նրանք կարծում են, որ իրենց դերը դատախաղի ժամանակ աննշան է եղել և իրենք չեն ստացել այն օգուտը կամ գիտելիքները, ինչ «դատախազները» և «փաստաբանները»: Կարելի է փորձել փարատել իրենց այս տեսակետները, քանի որ թե ապագա փաստաբանի և թե ապագա դատախազի համար չափազանց կարևոր է հնարավորինս լավ պատկերացնել ամբաստանյալի, տուժողի, վկայի հոգեբանությունը, նրանց շարժառիթները:

Համոզված ենք, որ՝ ով գոնե մեկ անգամ, լինի դա դատախաղի ընթացքում թե իրական կյանքում, հանդես է եկել որպես վկա, նա հետագայում, գտնվելով մեղադրողի կամ պաշտպանի դատավարական կարգավիճակում, շատ ավելի լավ կպատկերացնի, թե ինչ կերպ կառուցել այս կամ այն վկայի հարցաքննությունը և ինչ կարելի է սպասել այս կամ այն վկայից: Կարևոր է այս փաստարկները ներկայացնել մասնակիցներին:

Ամեն դեպքում կարևոր է, որ այս կամ այն կարգավիճակում դատախաղին ներգրավված լինեն դահլիճում գտնվող բոլոր ունկնդիրները (ուսանողները):

Հաճախ դատախաղին մասնակցում են տարբեր ԲՈՒՀ-երի կամ՝ նույն ԲՈՒՀ-ի տարբեր կուրսերի (խմբերի) ուսանողներ: Եթե դա թիմային մրցույթ չէ, ապա ցանկալի կլինի, որ դատավարության կողմերը ձևավորվեն խառը սկզբունքով՝ ամեն կողմում լինեն բոլոր ԲՈՒՀ-երից կամ նույն ԲՈՒՀ-ի տարբեր խմբերից մասնակիցներ: Հակառակ դեպքում վկաները, երբեմն անկախ իրենցից, նախապատվություն են տալու այն կողմին, որը բաղկացած է իրենց համակուրսեցիներից և, կամա թե ակամա, փորձելու է իր հարցաքննության ընթացքում օգնել նրանց: Բացի այդ, խառը սկզբունքով ձևավորված թիմերի մասնակիցները ձեռք են բերում անձանոթ թիմի հետ համագործակցելու հմտություն, ինչը հաճախ է պետք գալիս փաստաբաններին, երբ նրանք պաշտպանություն են իրականացնում այնպիսի գործերով, որտեղ կան մի քանի մեղադրյալներ:

Եթե դատախաղը վերաբերվում է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու (կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու) հարցին, ապա այս դեպքում դերերը զգալիորեն քչանում են՝ չեն մասնակցում վկաներ, տուժող, դատախազ: Այս դատավարությունը չի կարող անցնել նաև երդվյալների մասնակցությամբ:

Ինչպես ընտրել երդվյալներին՝ տես դատախաղին դատավորի կողմից կատարվելիք քայլերի ուղեցույցը

Ինչպես անցկացնել դատական քննությունը.

Դատական քննությունը ցանկալի է անցկացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-44 գլուխներով սահմանված կանոններին հնարավորին չափով համապատասխան: Ավելին, ցանկալի է, որպեսզի դատախաղի համար նախատեսված դահլիճը կամ սենյակը հնարավորինս նման լինի իրական դատական դահլիճի:

Եթե դատախաղի նպատակների մեջ, ի թիվս այլի, մտնում է ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի կիրառման հմտությունների զարգացումը, ապա կարելի է դատախաղի մեջ մտցնել նոր օրենսգրքի որոշակի էլեմենտներ, օրինակ, բացման խոսքեր, ապացույցների թույլատրելիության նոր չափանիշներ և այլն: Իհարկե, այդ դեպքում և մասնակիցները, և «դատավորը» պետք է նախապես իմանան այդ կանոնների կիրառման մասին և պատշաճ ձևով նախապատրաստված լինեն:

Եթե ամեն կողմում հանդես են գալիս մեկից ավելի մեղադրող և պաշտպան, ապա անհրաժեշտ է նախապես կատարել նրանց միջև դերաբաշխում. բացման խոսքը, պաշտպանական ճառը, վկաներից

յուրաքանչյուրի հարցաքննությունը, այս կամ այն միջնորդության հարուցումը պետք է նախապես բաշխված լինեն նրանց միջև:

Բացի այդ, կողմերը պետք է պատրաստ լինեն նաև (1) կարծիք հայտնելու մյուս կողմի հնարավոր միջնորդությունների դեմ և հիմնավորելու այդ կարծիքը, (2) վկայի կամ փորձագետի հարցաքննության ժամանակ առարկելու մյուս կողմի հարցերի դեմ, (3) առարկելու նախագահողի գործողությունների դեմ, (4) անելու հայտարարություններ:

Վկաները, մեղադրյալն ու տուժողը պետք է լավ նախապատրաստված լինեն իրենց դերերը, շատ լավ ուսումնասիրած լինեն իրենց նախկին ցուցմունքները: Նրանք կարող են փոխել իրենց նախկին ցուցմունքները, սակայն չպետք է տան այնպիսի ցուցմունքներ կամ կատարեն այնպիսի հայտարարություններ, որոնք դուրս են գալիս գործի կոնտեքստից: Օրինակ, մեղադրյալը հանկարծ, բոլորի համար անսպասելիորեն, հայտարարի, որ ինքը մեղավոր է, եթե դատախաղի ընթացքում պաշտպանական կողմը նախապատրաստված է եղել վիճարկելու նրա մեղավորությունը: Կամ վկան, ով դեպքի ականատեսն է եղել և նրա ականատես լինելը չի վիճարկվում, հանկարծ հայտարարի, որ չի տեսել դեպքը և այլն:

Թեև իրական պայմաններում վկայի (ամբաստանյալի, տուժողի, փորձագետի) հարցաքննության տևողությունը սահմանափակման ենթակա չէ, սակայն դատախաղի ժամանակ այն կարող է սահմանափակվել: Կարևոր է նախապես այդ մասին ասել մասնակիցներին, սահմանել յուրաքանչյուր հարցաքննության առավելագույն տևողությունը և պայմանավորվել դատավորի հետ, որպեսզի նա հետևի այդ կանոնի պահպանմանը:

Դատական վիճաբանություններից առաջ ցանկալի է հայտարարել 30-60 րոպեանոց ընդմիջում, որպեսզի կողմերը կարողանան ի մի բերել դատաքննության ընթացքում հետագոտված ապացույցները, պատրաստել իրենց ճառերը կամ փոփոխություններ մտցնել նախապես պատրաստված ճառերի մեջ: Ընդ որում, եթե մեղադրողի ճառից հետո պաշտպանական կողմն էլի ժամանակ խնդրի, ապա գերադասելի է տրամադրել գոնե 15 րոպե:

Կողմերը պետք է տեղեկացված լինեն, որ դատախաղի ընթացքում ողջունվում են տեղին կատարված հղումները ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին: Այդպիսի հղումները հատկապես կարևոր դեր կունենան կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հետ կապված դատախաղերում:

Ինչպես ամփոփել դատախաղի արդյունքները.

Դատական վիճաբանություններից և ամբաստանյալի վերջին խոսքը լսելուց հետո «դատավորը» հեռանում է խորհրդակցական սենյակ և, մոտ մեկ ժամ հետո, հայտարարում իր «դատավճիռը»: Եթե դատավարությանը մասնակցել են նաև երդվյալներ, ապա դատավորի հետ միաժամանակ նրանք հեռանում են մեկ այլ առանձին սենյակ, որտեղ քննարկում են իրենք վերդիկտը:

Խորհրդակցելիս երդվյալները պետք է հետևեն հետևյալ կանոններին՝ տես Հրահանգներ երդվյալ ատենակալների համար

Դատավճիռը և երդվյալների վերդիկտը հրապարակելուց հետո ամփոփվում են դատախազի արդյունքները. կազմակերպիչները, երդվյալների ու դատավորի հետ խորհրդակցելով, որոշում են լավագույն մասնակիցներին: Լավագույնները կարող են ընտրվել մի քանի տարբեր դասակարգումներում. լավագույն հարցաքննություն, լավագույն ցուցմունք, օրենքի լավագույն իմացություն, Եվրոպական կոնվենցիայի լավագույն իմացություն, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՍԻԵԳ-ի իրավական դիրքորոշումների լավագույն իմացություն, լավագույն ճառ և այլն: Ցանկալի է, որ լավագույնները ստանան հուշանվերներ:

Հավելված 1.

Որոշում

մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին

30 սեպտեմբերի 2014թ

քաղ.Երևան

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության ավագ քննիչ, մայոր Ա.Խ.-ս, վերանայելով թիվ ---1--- քրեական գործի նյութերը մեղադրյալ Կարեն Կարապետյանի վերաբերյալ,

Պարզեցի

Թիվ ---1--- քրեական գործը հարուցվել է 2014 թվականի փետրվարի 4-ին՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Գործով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Կարեն Կարապետյանը, զբաղեցնելով × մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնը, այսինքն՝ հանդիսանալով պետական մարմնում կազմակերպական-տնօրինչական գործառույթներ մշտապես իրականացնող պաշտոնատար անձ, × մարզպետի 2010 թվականի փետրվարի 23-ի թիվ 13-Ա որոշմամբ սահմանված՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի 11-րդ կետի գ) ենթակետով նախատեսված վարչության պետի իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պարտավոր լինելով վերահսկել նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և

կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը և քաջատեղյակ լինելով ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 01/10/9769-13 շրջաբերականով և այլ նորմատիվ ակտերով սահմանված՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված թեմատիկ և կիսամյակային ստուգողական գրավոր աշխատանքների տետրերը հանրակրթական ուսումնական հաստատություններում դպրոցականներին՝ բացառապես ծնողական խորհուրդների համաձայնությամբ տրամադրելու կարգի և մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ուսումնական հաստատություններում ուսումնաօժանդակ նյութերի վաճառքը բացառելու պահանջների մասին, 2013 թվականի հոկտեմբեր ամսին, իր ենթակայության տակ գտնվող մշակույթի և սպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Գ.Ս.-ից տեղեկանալով, որ վերջինս մտադրվել է մարզի տարածքում գտնվող դպրոցներում ապօրինի իրականացնել ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված թեմատիկ և կիսամյակային ստուգողական գրավոր աշխատանքների տետրերի վաճառք, իր պաշտոնական լիազորությունները չկատարելու՝ թողտվության և Գ.Ս.-ի ապօրինի գործունեությունն հովանավորելու համար, 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, որպես կաշառք վերջինիցս անձամբ պահանջել և իր աշխատասենյակում ստացել է ընդհանուր՝ 1.000.000 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, Կարեն Կարապետյանը, 2013 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, նախնական համաձայնության գալով մարզպետարանի ենթակայության տակ գտնվող դպրոցների տնօրենների հետ, վերջիններից միջոցով, դպրոցներում աշխատանքի ընդունելու համար, տարբեր քաղաքացիներից որպես կաշառք պահանջել և ստացել են տարբեր չափերի գումարներ:

Կարեն Կարապետյանը, 2014 թվականի փետրվարի 11-ի ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով:

2014 թվականի փետրվարի 14-ին Կարեն Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար:

2014 թվականի մայիսի 15-ին Կարեն Կարապետյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել՝ երկու դրվագով տարբեր չափերի գումարներ որպես կաշառք պահանջելու և ստանալու համար, յուրաքանչյուր դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի համապատասխան մասով:

Բացի այդ, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում քննվող թիվ ----2---- քրեական գործով՝ 2014 թվականի հունիսի 13-ին Կարեն Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով:

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչության պետի՝ 17.06.2014 թվականի թիվ 7-136բբ-14

գրությամբ՝ թիվ ---2--- քրեական գործը՝ թիվ ----1---- քրեական գործին միացնելու և մեկ վարույթում նախաքննությունը շարունակելու համար ուղարկվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչություն:

2014 թվականի հունիսի 20-ի որոշմամբ՝ թիվ ----2--- քրեական գործը միացվել է թիվ ----1--- քրեական գործին և նախաքննությունը շարունակվում է ----1---- համարով:

2014 թվականի հունիսի 24-ին Կարեն Կարապետյանին՝ երկու դրվագով տարբեր չափերի գումարներ որպես կաշառք պահանջելու և ստանալու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի տարբեր մասերով առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է և նրան կրկին մեղադրանք է՝ երկու դրվագով տարբեր չափերի գումարներ որպես կաշառք պահանջելու, ստանալու և նախնական համաձայնությամբ, պաշտոնական դիրքն օգտագործելով յուրացնելու եղանակով առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար:

Այսպես՝

Դրվագ 1-ին՝ Կարեն Կարապետյանը, 2013 թվականի հոկտեմբերի 15-ին, Գ.Ս.-ից տեղեկանալով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված թեմատիկ և կիսամյակային ստուգողական գրավոր աշխատանքների տեսրերի × մարզի դպրոցներում ապօրինի իրացման հանցավոր մտադրության մասին, շահադիտական դրդումներից ելնելով, համաձայնել է իրականացնել հովանավորչություն, և վերջինիս հետ պլանավորելով և քննարկելով նախանշված ապօրինի գործողությունների մանրամասները, տեղեկացել է նաև, որ ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված տեսրերը Գ.Ս.-ի կողմից × մարզ են տեղափոխվելու յուրաքանչյուրը՝ 280 ՀՀ դրամ գումար արժեքով և մարզի տարածքում գտնվող նրա ծանոթի խանութում պահեստավորվելուց հետո, վաճառվելու են՝ 450 դրամ գումարով:

Ընդ որում, Կարեն Կարապետյանը, դեռևս քննարկման փուլում՝ մինչև Գ.Ս.-ի կողմից տեսրերի ապօրինի վաճառքի իրականացումը, նպատակ ունենալով խուսափել հնարավոր բացահայտումից և հնարավորինս քողարկելով իր հովանավորչությամբ Գ.Ս.-ի կողմից ապօրինի իրականացվող տեսրերի վաճառքը, վերջինիս առաջարկել է տեսրերը պահեստավորել × մարզի × քաղաքի թիվ × ավագ դպրոցի տարածքում և տեսրերի իրացմանը մասնակից դարձնել նաև նույն դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ՝ Գ.Վ.-ին:

Կարեն Կարապետյանը, Գ.Ս.-ի հետ հանցավոր մտահաղացումն իրականացնելու վերաբերյալ նախապես համաձայնության են եկել, որ յուրաքանչյուր տեսրի իրացումից առաջացած 170 դրամ շահույթից՝ 100 դրամը վերջինս փոխանցելու է Կարեն Կարապետյանին, սակայն հետագայում, ի վերջո տեսնելով, որ Գ.Ս. պատշաճ չի կատարում ստանձնած պարտավորությունը, Կարեն Կարապետյանը, 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իր հովանավորչության դիմաց Գ.Ս.-ից՝ որպես կաշառք պահանջել և երկու դեպքով ստացել է՝ 1.000.000 դրամ գումար:

Բացի այդ, 2013 թվականի նոյեմբերի 6-ին՝ Գ.Ս.-ի կողմից տեսրերի ապօրինի իրացման ընթացքում, × մարզի × գյուղի դպրոցի 10-րդ դասարանի աշակերտի ծնողը՝ ՀՀ ԿԳՆ «թեժ գիծ» հեռախոսակապի միջոցով անանուն ահազանգել է այն մասին, որ նշված դպրոցում տեսրերի համար 500-ական դրամ են պարտադրաբար հավաքում: Ստացված ահազանգը սահմանված կարգով

ընթացք տալու համար, 08.11.2013 թվականի թիվ 04/23/13435-13 գրությամբ ՀՀ ԿԳՆ կողմից այն ուղարկվել է × մարզպետարան և նույն օրը այն մակագրվել է Կարեն Կարապետյանին, իսկ վերջինիս կողմից՝ Գ.Ս.-ին: Այնուհետև, Կարեն Կարապետյանը, շարունակելով հովանավորել Գ.Ս.-ի կողմից իրականացվող ապօրինի գործողությունները և նպատակ ունենալով թաքցնել իր և Գ.Ս.-ի առնչությունը տեղի ունեցող հանցագործությանը ու խուսափել պատասխանատվությունից, անձամբ միջոցներ է ձեռնարկել տեսրերի ապօրինի իրացման փաստը քողարկելու համար:

Մասնավորապես, Կարեն Կարապետյանը, × մարզի × գյուղի դպրոցի տնօրեն Ն.Ա.-ին նախազգուշացրել է ստացված ահազանգի և դրա հիման վրա իրականացվելիք ստուգման մասին և կարգադրել՝ հետին ամսաթվով կազմել տեսրերը ձեռք բերելու մասին դպրոցի ծնողական խորհրդի որոշման վերաբերյալ կեղծ արձանագրություն: Միաժամանակ, Կարեն Կարապետյանը, 2013 թվականի նոյեմբերի 12-ին Գ.Ս.-ին հայտնելով, որ Ն.Ա.-ը տեղեկացված է, վերջինիս կարգադրել է հիմք ընդունել հետին ամսաթվով կազմված կեղծ արձանագրությունը, ստուգման արդյունքներով հաստատել և ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հայտնել, որ ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված տեսրերը ձեռք են բերվել ՀՀ ԿԳՆ 2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 01/10/9769-13 շրջաբերականով սահմանված պահանջներին համապատասխան կարգով: Դրանից հետո, կատարելով Կարեն Կարապետյանի կողմից տրված ապօրինի կարգադրությունները, Գ.Ս. նախապատրաստել և 13.11.2013 թվականի թիվ 04/12.2/3501-13 պատասխան գրությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հայտնել է, որ × գյուղի դպրոցում ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված տեսրերը ձեռք են բերվել ծնողական խորհրդի նախաձեռնությամբ:

Այսպիսով, Կարեն Կարապետյանը, իր պաշտոնական լիազորությունները չկատարելու՝ թողություն և Գ.Ս.-ի ապօրինի գործունեությունն հովանավորելու համար, 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին որպես կաշառք վերջինիցս անձամբ պահանջել և իր աշխատասենյակում ստացել է խոշոր չափերով՝ 1.000.000 ՀՀ դրամ գումար, այսինքն՝ կատարել է հանցագործություն, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Դրվագ 2-րդ՝ ՀՀ քաղաքացի Ա.Մ.-ը, զբաղեցնելով ՀՀ × մարզպետարանի ենթակայության տակ գտնվող՝ »× միջնակարգ դպրոց« ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը՝ հանդիսանալով պաշտոնատար անձ, 2013 թվականի սեպտեմբեր ամսի վերջին տեղեկանալով, որ նույն մարզի × դպրոցում առկա է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի թափուր հաստիք, շահադիտական դրդումներով, ցանկանալով նշված դպրոցում աշխատանքի ընդունել ՀՀ քաղաքացի, ×մարզի × համայնքի բնակիչ՝ Ս.Պ.-ին, դիմել է × դպրոցի տնօրենին, սակայն վերջինս տեղեկանալով, որ Ս.Պ.-ին աշխատանքի ընդունելու համար անհրաժեշտ է × մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Կարեն Կարապետյանի համաձայնությունը, այցելել է վերջինիս և նրա աշխատասենյակում քննարկելով Ս.Պ.-ի աշխատանքի ընդունելու հարցը, նախնական համաձայնությամբ որոշել են վերջինիցս՝ որպես կաշառք պահանջել 300 ԱՄՆ դոլար գումար:

Այնուհետև, Կարեն Կարապետյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Ա.Մ.-ը, Ս.Պ.-ից որպես կաշառք պահանջել է 121.851 ՀՀ դրամ գումարին համարժեք՝ 300 ԱՄՆ դոլար

գումար, ով համաձայնելով պահանջին, հաջորդ օրն անձամբ Ա.Մ.-ին՝ վերջինիս տան բակում փոխանցել է 250 ԱՄՆ դոլար գումար, պատճառաբանելով, որ ավել գումար չի կարողացել հայթայթել: Հաշվի առնելով, որ Ս.Պ.-ն՝ աշխատանքի ընդունվելու կապակցությամբ դեռևս մտադիր է կոլեկտիվի համար ճաշկերույթ կազմակերպի, Ա.Մ.-ը նրանից որպես կաշառք ստացված 250 ԱՄՆ դոլար գումարից՝ 50 ԱՄՆ դոլարը վերադարձրել է, իսկ մնացած 200 ԱՄՆ դոլարը՝ 2013 թվականի սեպտեմբերի 23-ին անձամբ տվել է Կարեն Կարապետյանին՝ վերջինիս աշխատասենյակում:

Այսպիսով, Կարեն Կարապետյանը, Ա.Մ.-ի հետ նախնական համաձայնությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, Ս.Պ.-ին՝ \times մարզի \times դպրոցում որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ նշանակելուն նպաստելու համար՝ վերջինիցս պահանջել են 121.851 ՀՀ դրամ գումարին համարժեք՝ 300 ԱՄՆ դոլար, սակայն ստացել են 81.234 ՀՀ դրամ գումարին համարժեք՝ 200 ԱՄՆ դոլար գումար, այսինքն՝ կատարել է հանցագործություն, նախատեսված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Քրեական գործով կատարվել են՝ խուզարկություններ, ուղարկվել են հարցումներ, նշանակվել են՝ դատաապրանքագիտական և դատահաշվապահական փորձաքննություններ, կատարվել են առգրավումներ, հարցաքննվել են վկաներ՝ ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված տետրերի ապօրինի իրացման դեպքով միայն \times մարզից հարցաքննվել են շուրջ 50 վկաներ, կատարվել են առերես հարցաքննություններ, օպերատիվ ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ, կատարվել են բազմաթիվ հարցումներ, ստացվել են նշանակված դատաապրանքագիտական և դատահաշվապահական փորձաքննությունների եզրակացությունները, դատարանի համապատասխան թույլտվությամբ ՀՀ –ում գործող բջջային կապի ծառայություններ մատուցող տարբեր ընկերություններից պահանջվել են մեղադրյալների, ինչպես նաև՝ գործով անցնող այլ անձանց կողմից կատարված հեռախոսազանգերի վերծանումները, բացի Կարեն Կարապետյանից ևս ութ անձինք գործով ներգրավվել են որպես մեղադրյալներ և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ, 312-րդ և 179-րդ հոդվածների համապատասխան մասերով, ինչպես նաև՝ կատարվել են այլ անհրաժեշտ քննչական գործողություններ:

Բացի այդ, նախաքննությամբ բացահայտվել են նաև՝ Կարեն Կարապետյանի կողմից ապօրինի գործողությունների կատարման հնարավոր այլ դրվագներ, մասնավորապես՝ քաղաքացիներից որպես կաշառք տարբեր չափերի գումարներ պահանջելու և ստանալու այլ դեպքեր, ուստի նկատի ունենալով, որ քրեական գործով դեռևս անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը՝ հարցաքննել վկաներ, կատարել առգրավումներ, զննություններ, ստանալ օպերատիվ մարմնին տրված հանձնարարությունների և հարցումների պատասխանները, անհրաժեշտության դեպքում նշանակել նոր փորձաքննություններ և Կարեն Կարապետյանին առաջադրված մեղադրանքը կրկին փոփոխել, լրացնել և վերջինիս նոր մեղադրանք առաջադրել, իրավական գնահատական տալ գործով անցնող այլ անձանց գործողություններին, ավարտել քրեական գործով նախաքննությունը, քրեական գործի նյութերը ծանոթացման համար տրամադրել մեղադրյալներին, ապահովելով քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը և լրիվությունը, իսկ Կարեն Կարապետյանին կալանքի

տակ պահելու ժամկետը լրանում է 2014 թվականի հոկտեմբերի 11-ին, և չեն վերացել նրան կալանքի տակ պահելու հիմքերը, այն է՝ Կարեն Կարապետյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդասական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ ապօրինի ազդեցություն գործադրելով քրեական դատավարության մասնակցող անձանց վրա, ինչի հավանականությունն առավել մեծացել է, քանի որ նրան մեղադրանք է առաջադրվել մի քանի դեպքերով ծանր հանցագործություն կատարելու համար, ինչպես նաև՝ նախաքննությամբ բացահայտվել են վերջինիս կողմից ապօրինի գործողությունների կատարման հնարավոր այլ դեպքեր, իսկ Կարեն Կարապետյանը դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում, արդեն իսկ դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ, մասնավորապես՝ Գ.Ս.-ից տեղեկանալով, որ վերջինս ՀՀ ԱԱԾ մարմիններին բացատրություն տալով՝ պատմել է դեպքի վերաբերյալ ճշմարտությունը, նրան առաջարկել է իր մասնակցության մասին իրավապահ մարմիններին այլևս չհայտնել, կատարվածը ամբողջությամբ վերցնել իր վրա, դրա դիմաց խոստանալով լավ հեռանկար, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-139 և 285 հոդվածների պահանջներով,

Որոշեցի

1. Միջնորդություն հարուցել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին՝ քրեական գործով մեղադրյալ Կարեն Կարապետյանին կալանքի տակ պահելու ժամկետն երկարացնելու երկու ամսով՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 11-ը:
2. Որոշման պատճեն հանձնել Կարեն Կարապետյանին:

Հավելված 2.

Մարգիս Գալստյանին նախաքննական մարմինը մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, այն պատճառաբանությամբ, որ նա 2014 թվականի հունվարի 12-ին ժամը 22:30-ից 23:00-ի սահմաններում Երևան, Արցախի փողոցի 10 շենքի շքամուտքում մարմնական վնասվածք հասցնելու դիտավորությամբ երկաթե ձողով հարվածել է տուժող Գեղամ Սահակյանի գլխին, նրան պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք՝ գանգոսկրի փակ կոտրվածքի, գլխամաշկի պատռվածքի, արյունազեղումների ձևով:

Ապացույցները

Տուժողը ցուցմունք է տվել, որ դեպքի օրը մասնակցել է իր ընկերոջ՝ Կարեն Սաֆարյանի ծննդյան խնջույքին, օգտագործել է ոգելից խմիչքներ և ժամը 22:00 սահմաններում հրաժեշտ տալով իր ընկերներին դուրս է եկել ռեստորանից և քանի որ խմած է եղել և իրեն լավ չի զգացել, որոշել է թարմանալու համար ոտքով տուն գնալ: Երբ մտել է Արցախի փողոցի 10 շենքի շքամուտք և ցանկացել է բարձրանալ իր բնակարան, անսպասելի, ետևից կոշտ առարկայով գլխին ստացել է հարված և վայր ընկել: Ստացած հարվածը եղել է ուժեղ և ինքը չի կարողացել շարժվել, միայն մի պահ նկատել է, որ մի բարձրահասակ, սպորտային համազգեստով թիկնեղ տղամարդ ձեռքի ձողը զցելով գետնին, վազելով դուրս է փախչում շքամուտքից, որից հետո ուշագնաց է եղել: Ինքը չի նկատել, որ տուն գալու ընթացքում, ինչ-որ մեկը իրեն հետևի, ոչ մեկին չի նկատել նաև շքամուտքում, իրեն հարվածողին տեսել է հետևից՝ դուրս փախչելիս: Ինքը համոզված է, որ իրեն հարվածողը եղել է Սարգիս Գալստյանը, քանի որ ինքը ամուսնացել է Սարգիս Գալստյանի նախկին կնոջ՝ Մուսաննա Դավթյանի հետ, և այդ կապակցությամբ Սարգիս Գալստյանը բազմիցս սպառնացել է իրեն վնաս է տալու, անգամ մի անգամ իրենց միջև տեղի է ունեցել քաշքշուկ և նա պահանջել է հանգիստ թողնել իր կնոջը և երեխային: Սարգիս Գալստյանը նույնպես թիկնեղ է, բարձրահասակ և այդ հատկանիշներից ելնելով ինքը (տուժողը) մտածում է, որ նա հենց այն տղամարդն է, որին տեսել է գլխին հարվածը ստանալուց անմիջապես հետո: Իր մոտից որևէ թանկարժեք իր, գումար չի վերցվել:

Սարգիս Գալստյանը 13.01.2014 թվականին հարցաքննվել է, որպես վկա և ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է Գեղամ Սահակյանին մանկուց, նրանք նույն թաղամասի բնակիչներ են, սովորել են նույն դպրոցում զուգահեռ դասարաններում, իրար հետ ընկերություն չեն արել, բայց գտնվել են նորմալ հարաբերությունների մեջ: Ինքը 2010 թվականի հունիս ամսին ամուսնացել է Մուսաննա Դավթյանի հետ, բնակվել են միասին իրեն պատկանող Արցախի փողոցի 14-րդ շենքի թիվ 5 բնակարանում, ամուսնության ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ 03.06.2012 թվականին ծնված Վիկտորիա Գալստյանին: Իր և Մուսաննա Դավթյանի հարաբերությունները սկսած 2013 թվականից լարվել են, հաճախ վիճաբանել են, որի պատճառով 2013 թվականի օգոստոս ամսին Մուսաննա Դավթյանը երեխայի հետ հեռացել է իրենից և բնակվել է հայրական տանը: Որոշ ժամանակ անց իմացել է, որ Մուսաննա Դավթյանին սիրահետում է և ցանկանում է նրա հետ ամուսնանալ Գեղամ Սահակյանը: Ցանկանալով վերականգնել իր ընտանիքը, մի քանի անգամ հանդիպել և զրուցել է Մուսաննա Դավթյանի, Գեղամ Սահակյանի հետ, սակայն տեսնելով, որ չի կարողանում հաշտվել Մուսաննա Դավթյանի հետ, որոշել է այլևս նրանց չանհանգստացնել, Գեղամ Սահակյանին, Մուսաննա Դավթյանին վնասելու, սպանելու սպառնալիքներ չի տվել, և ոչ մեկին մարմնական վնասվածք չի հասցրել: 12.01.2014թ. երեկոյան ինքը գնացել է խանութ ծխախոտ գնելու և հիմնականում գտնվել է տանը, քանի որ այդ օրը կիրակի էր և իր հանգստյան օրն է: Մուսաննա Դավթյանը անհիմն է իրեն մեղադրում Գեղամ Սահակյանին մարմնական վնասվածք հասցնելու մեջ, դա նրա ենթադրությունն է:

Սարգիս Գալստյանը 26.03.2014թ. ձերբակալվել է և հրաժարվել է որպես կասկածյալ ցուցմունք տալուց: 29.03.2014թ. Սարգիս Գալստյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, նույն օրը դատարանի որոշմամբ կալանավորվել է: Սարգիս Գալստյանը հրաժարվել է որպես մեղադրյալ ցուցմունք տալուց:

Ցուցմունք տալուց հրաժարվելու պատճառաբանությամբ առերեսումներ չեն կատարվել Սարգիս Գալստյանի, Գեղամ Սահակյանի, Սուսաննա Դավթյանի միջև:

Ըստ դեպքի վայրի զննության արձանագրության, Արցախի փողոցի 10 շենքի շքամուտքի աջ անկյունում գետնի վրա հայտնաբերվել է 80 սմ երկարությամբ կլորավուն երկաթե ձող, որի մի ծայրին ամրացված է ռետինե բռնակ, իսկ մեջտեղի մասում չորացած արնանման հետք: Արնանման հետքեր են հայտնաբերվել նաև շքամուտքի տարբեր հատվածներում, որոնք լուսանկարվել են և վերցվել են փորձագետին տրամադրելու համար:

Դատաբժշկական փորձաքննություն թիվ ----- եզրակացության համաձայն, տուժող Գեղամ Սահակյանին հասցված վնասվածքը՝ զանգուսկրի փակ կտրվածքի ձևով, համարվում է կյանքին վտանգ սպառնացող և դասվում է ծանր մարմնական վնասվածքների շարքին, վնասվածքը հասցվել է բութ առարկայով, հնարավոր է փորձաքննության ներկայացված երկաթե ձողով, և որոշման մեջ նշված ժամանակահատվածում:

Դատակենսաբանական փորձաքննություն թիվ ----- եզրակացության համաձայն, երկաթե ձողի վրա, ինչպես նաև դեպքի վայրում հայտնաբերված կարմրավուն նյութի հետքերը մարդու արյուն են և արյան խումբը համընկնում է Գեղամ Սահակյանի արյան խմբի հետ:

Վկա Վիտալի Կարապետյանը 25.03.2014թ. ցուցմունք է տվել, որ մանկուց բնակվում է Արցախի փողոցի 10 շենքի թիվ 11 բնակարանում, ճանաչում է իր հարևան Գեղամ Սահակյանին և նրա հետ գտնվում է նորմալ հարաբերությունների մեջ: Աշխատանքի բերումով ճանաչում է նաև Սարգիս Գալստյանին, քանի որ նա մի քանի անգամ դիմել է իրեն՝ ավտոմեքենան վերանորոգելու համար: Վերջին անգամ նա Սարգիս Գալստյանին հանդիպել է 2014թ. հունվարի 12-ին երեկոյան ժամը 23:00-ի սահմաններում, Արցախի փողոցի 10 շենքի բակում, նա եղել է սպորտային համազգեստով, միասին մոտ երեք րոպե խոսել են, որից հետո Սարգիս Գալստյանը հրաժեշտ տալով հեռացել է դեպի փողոցի կողմը: Վկան հիշում է այդ օրը, քանի որ Սարգիս Գալստյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել հաջորդ օրը՝ 13.01.2014թ-ին. հին նոր տարվա կապակցությամբ հանդիպել, վերանորոգել ավտոմեքենան, որից հետո նշել հին տոմարով նոր տարին: Սակայն իրեն անհայտ պատճառներով Սարգիս Գալստյանը իրեն չի զանգահարել և չեն հանդիպել: Սարգիս Գալստյանն ինչ-որ մեկին սպասելուց չի եղել, նրա մոտ երկաթե ձող չի նկատել, նա եղել է անհանգիստ և ասել է, որ գործեր ունի, շտապում է, վաղը կհանդիպեն:

Վկա Սուսաննա Գավթյանը 25.03.2014թ. ցուցմունք է տվել, որ մեղադրյալն իր նախկին ամուսինն է, որի հետ ամուսնալուծվել են 2013 թվականի օգոստոս ամսին: Այն բանից հետո, երբ իրեն ամուսնության առաջարկ է արել տուժողը, նախկին ամուսինը սկսել է հետապնդել իրենց, տարբեր սպառնալիքներ հնչեցնել իր՝ Սուսաննա Գավթյանի, ինչպես նաև Գեղամ Սահակյանի հասցեին: Վկան նշեց, որ ինքը համոզված է, որ հանցագործությունը կատարվել է հենց Սարգիս Գալստյանի կողմից, քանի որ ուրիշ ոչ ոք նման հանցագործություն կատարելու շարժառիթ չի ունեցել:

Գատաքնության ժամանակ վկա Վիտալի Կարապետյանը, բազմիցս ծանուցված լինելով, դատարան չի ներկայացել: Գատարանը նրան բերման ենթարկելու որոշում է կայացրել, սակայն ոստիկանները չեն կարողացել պարզել նրա գտնվելու վայրը և բերման ենթարկել դատարան, որի պատճառով դատական նիստը երեք անգամ հետաձգվել է: Ի վերջո, մեղադրողի միջնորդության հիման վրա դատարանը որոշել է հրապարակել վկայի նախաքննական ցուցմունքը, որի վերաբերյալ պաշտպանը առարկել է:

Տուժողը և վկա Սուսաննա Գավթյանը դատաքնության ժամանակ պնդել են իրենց նախաքննական ցուցմունքները:

Գատաքնության ժամանակ հարցաքննվել են նաև Երևան, Արցախի փողոցի 10 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչներ Գալուստ Արամյանը և Հակոբ Հակոբյանը, ովքեր մույնաբովանդակ ցուցմունք են տվել այն մասին, որ 2014 թվականի հունվարի 12-ին ժամը 22:30-ից 23:00-ի սահմաններում անսովոր ձայներ են լսել իրենց շենքի շքամուտքի հատվածից, դուրս են եկել և տեսել տուժողին՝ անգիտակից վիճակում, արյունոտված գետնին ընկած: Նրան ցուցաբերել են առաջին օգնություն, սակայն չեն կարողացել ուշքի բերել, որից հետո զանգահարել են շտապօգնություն: Առաջին պահին տուժողին տեսնելիս լսել են, որ վերջինս զառանցում է, հիշատակելով ինչ-որ »Սաքո«, որից հետո այլևս ոչինչ չի ասել և ուշքի չի եկել:

Հավելված 3.

Հաստատում եմ

XXX վարչական շրջանի

դատախազի տեղակալ, արդարադատության

առաջին դասի խորհրդական՝

_____ Ա..Չ.

»20« 11 -----թ.

Մեղադրական եզրակացություն

Թիվ × քրեական գործով, ըստ
մեղադրանքի՝ Արմեն Հարությունյան՝ ՀՀ
քր. օր.-ի 188 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով

Սույն քրեական գործով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է հետևյալը.

Գործով մեղադրյալ Արմեն Հարությունյանը չհանդիսանալով »Տ.Ս.« ՍՊԸ-ի աշխատակից, »Տ.Ս.« ՍՊԸ-ի կողմից վարձակալած Երևան քաղաքի Աթայան 43 հասցեում գտնվող տարածքում առանց պետական գրանցման 2009 թվականից մինչև 2010 թվականի փետրվար ամիսն ներառյալ ընկած ժամանակահատվածում, իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրություն, այն է՝ արտադրել և վաճառել է հաց՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 2 785 632 ՀՀ դրամի վնաս, որը տուգանքներով կազմում է 35 870 400 ՀՀ դրամ: Նշված ժամանակահատվածում աշխատելու ժամանակ, որպես հացի արտադրամասի տնօրեն և ղեկավար, բանվորները ճանաչել են Արմեն Հարությունյանին, այլ ոչ թե »Տ.Ս.« ՍՊԸ-ի տնօրեն Ստեփան Գրիգորյանին:

Վերոգրյալ արարքի համար 07.06.----թ որոշում է կայացվել Արմեն Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 188 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Առաջադրված մեղադրանքում Ա.Հարությունյանը իրեն մեղավոր չի ճանաչել և հրաժարվել է ցուցմունք տալուց, ինչը պատժից և պատասխանատվությունից խուսափելու միտում է հետապնդում, քանի որ վերջինս որպես վկա հարցաքննվելիս, սկզբնական ցուցմունքներում նշել է, որ մինչև 2009 թվականի վերջերը ղեկավարել և տնօրինել է Երևան քաղաքի Աթայան 43 հասցեում գտնվող հացի արտադրամասը:

գ.թ. 1-ին հատոր 101-103, 3-րդ հատոր 181

Արմեն Հարությունյանի կատարած հանցանքը հիմնավորվել է քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված հետևյալ ապացույցներով.

Վկա Միեր Հարությունյանի ցուցմունքներով, այն մասին, որ դեռևս 1997թ-ին գնել է հացի արտադրություն իրականացնելու համապատասխան պարագաներ: 2002 թվականին իրեն պատկանող Երևան քաղաքի Աթայան 43 հասցեում գտնվող տարածքը վարձակալական հիմունքներով համապատասխան պայմանագրով տրամադրել է »Տ.Ս.« ՍՊԸ-ին, սակայն նշված տարածքում իր կողմից գնված հացի արտադրության պարագաներով, հացի արտադրամասը և խանութը՝ իրեն պատկանող համապատասխան սարքավորումներով փաստացի աշխատացրել է Արմեն Հարությունյանը:

գ.թ. 1-ին հատոր 53-55, 2-րդ հատոր 71-72

Վկա Նարեկ Ազարյանի ցուցմունքով այն մասին, որ 2000 թվականից մինչև 2010 թվականի մարտի 27-ը աշխատել է Աթայան 43 հասցեում գտնվող հացի արտադրամասում որպես հացթուխ: Որպես իր ղեկավար և հացի արտադրամասի տնօրեն ճանաչել է Արմեն Հարությունյանին: 2010 թվականի մարտի 27-ին իրեն Արմեն Հարությունյանը ասել է, որ արտադրամասը վերանորոգում են, գնա տուն և վերանորոգումից հետո կկանչեն, որից հետո չի կանչել: Իր աշխատած ժամանակահատվածում հացի արտադրության բոլոր պարագաները եղել են նշված արտադրամասում:

գ.թ. 1-ին հատոր 133-134, 3-րդ հատոր 164-166, 211-212

Վկա Սարգիս Ղազարյանի ցուցմունքով այն մասին, որ 2005-2006թթ.-ից մինչև 2010 թվականի մարտ ամիսը աշխատել է Աթայան 43 հասցեում գտնվող հացի արտադրամասում որպես հացթուխ: Որպես իր ղեկավար և հացի արտադրամասի տնօրեն ճանաչել է Արմեն Հարությունյանին: Հացի արտադրամասը աշխատել է երկու հերթափոխով և երկու հերթափոխի ընթացքում արտադրել են մոտ 900 հատ հաց, որը վաճառել են նշված հացի արտադրամասից: 2010 թվականի մարտ ամսին, իրեն Արմեն Հարությունյանը ասել է, որ այլուր չկա, գնա տուն և մի քանի օրից, երբ այլուրը կստանան կկանչեն, որից հետո չեն կանչել: Իր աշխատած ժամանակահատվածում հացի արտադրության բոլոր պարագաները եղել են նշված արտադրամասում:

գ.թ. 1-ին հատոր 128-129, 211, 255-256, 3-րդ հատոր 153-154, 213-214

Վկա Վիլեն Հովսեփյանի ցուցմունքով այն մասին, որ 2006 թվականից մինչև 2008 թվականի դեկտեմբեր ամիսը աշխատել է «Տ.Ս.» ՍՊԸ-ի Աթայան 43 հասցեում գտնվող խանութում, որպես սրահի վարիչ: Որպես իր ղեկավար և խանութը աշխատացնող ճանաչել է Արմեն Հարությունյանին: Խանութի հետ կապված, բոլոր հարցերի պատասխանատու եղել է Արմեն Հարությունյանը: Տեղյակ է եղել նաև, որ խանութի կողքը եղել է հացի արտադրամաս, որը աշխատացրել է Արմեն Հարությունյանը:

գ.թ. 1-ին հատոր 104-105

Վկա Արտակ Հարությունյանի ցուցմունքով այն մասին, որ 2006թ-ից մինչև 2008 թվականի տարվա վերջ, Արմեն Հարությունյանը 3-4 անգամ իրեն հրավիրել է Աթայան 43 հասցեում գտնվող հացի արտադրամաս, հացի արտադրամասի վառարանները վերանորոգելու նպատակով: Հացի արտադրամասը, թե ում է պատկանում, ինքը չի կարող ասել, միայն գիտի, որ այն աշխատացնում էր Արմեն Հարությունյանը:

գ.թ. 1-ին հատոր 125-126

Երևան քաղաքի Աթայան 43 հասցեում գտնվող տարածքի ծախսած էլեկտրաէներգիայի ամսական ծախսերով գ.թ. 1-ին հատոր 262, պետ. ռեգիստրից ստացված գրությունով, համաձայն որի՝ Արմեն Հարությունյանը «Տ.Ս.» ՍՊԸ-ում գրանցված չի եղել գ.թ. 3-րդ հատոր 123-124 և ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունից ստացված գրությունով, համաձայն որի՝ Արմեն Հարությունյանը »Տ.Ս.« ՍՊԸ-ում աշխատել է 01.06.2000թ-ից մինչև 01.06.2005թ, գ.թ. 3-րդ հատոր 283-284, որոնք որպես այլ փաստաթուղթ ճանաչվել են իրենին ապացույց: գ.թ. 3-րդ հատոր 308

Դատահաշվապահական փորձաքննության թիվ Z եզրակացությունով, որի համաձայն՝ Արմեն Հարությունյանի կողմից 2009թ-ի հունվար ամսից մինչև 2010 թվականի փետրվար ամիսն ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացված ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանը պատճառած վնասի չափը կազմում է 2 785 632 ՀՀ դրամ: Նշված 2 785 632 ՀՀ դրամ գումարի վնասը ներառված է տուգանքների ձևով հաշվարկված հարկերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ապօրինի գործունեության մասով վերջնական հարկային պարտավորություն հանդիսացող 35 870 400 դրամ տուգանքի գումարի մեջ:
գ.թ. 3-րդ հատոր 132-138

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62, 63 հոդվածների համաձայն՝ մեղադրյալ Արմեն Հարությունյանի վերաբերյալ մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ չեն դիտվում:

Վերոգրյալի հիման վրա

Արմեն Հարությունյան / ծնված xx թվականին,
ք.Երևան, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ
չդատված, ամուսնացած, խնամքին երկու անչափահաս
երեխա, հաշվառված xxxx հասցեում

Մեղադրվում է նրանում, որ նա չհանդիսանալով »Տ.Ս.« ՍՊԸ-ի աշխատակից, »Տ.Ս.« ՍՊԸ-ի կողմից վարձակալված Երևան քաղաքի Աթայան 43 հասցեում գտնվող տարածքում առանց պետական գրանցման 2009 թվականից մինչև 2010 թվականի փետրվար ամիսն ներառյալ ընկած ժամանակահատվածում, իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրություն, այն է՝ արտադրել և վաճառել է հաց՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 2 785 632 ՀՀ դրամի վնաս, որը տուգանքներով կազմում է 35 870 400 ՀՀ դրամ:

Այսպիսով, Արմեն Հարությունյանը կատարել է հանցավոր արարք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 188 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44 և 47 հոդվածների կարգով սույն քրեական գործն ընդդատյա է xxx դատարանին:

Մեղադրական եզրակացությունը կազմվել է Երևան քաղաքում՝ yyy թվականին:

X քննչական բաժնի ավագ քննիչ՝ ----- Ս.Ա.

Ցուցակ

/դատակոչի ենթակա անձանց/

1. Մեղադրյալ՝

Արմեն Հարությունյան
հասցե, հեռ՝ -----,
գ.ք. 1-ին հատոր 101-103,
3-րդ հատոր 181

2. Վկաներ՝

Մհեր Հարությունյան
հասցե, հեռ՝ -----,
գ.ք. 1-ին հատոր 53-55
2-րդ հատոր 71-72

Նարեկ Ազարյան
հասցե, հեռ՝ -----,
գ.ք. 1-ին հատոր 133-134,
3-րդ հատոր 164-166, 211-212

Սարգիս Ղազարյան
հասցե, հեռ.՝ -----,
գ.ք. 1-ին հատոր 128-129, 211, 255-256,
3-րդ հատոր 153-154, 213-124

Վիլեն Հովսեփյան
հասցե, հեռ.՝ -----
գ.ք. 1-ին հատոր 104-105

Արտակ Հարությունյան
հասցե, հեռ՝ -----,
գ.ք. 1-ին հատոր 125-126

X քննչական բաժնի ավագ քննիչ՝ ----- Ս.Ա.

Տեղեկանք

/թիվ x քրեական գործով/

1. Հանցագործությունը կատարվել է 2009 թվականից մինչև 2010 թվականի փետրվար ամսին ներառյալ ընկած ժամանակահատվածում

2. Թիվ x քրեական գործը հարուցվել է ----- 30.08.----- թվականին

3. Ա. Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օր-ի 188 հոդ., 3-րդ մասի, 1. է կետով և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին----- 07.06.-----թ.

4. Գործով քաղ. հայց չի ներկայացվել

5. Նախաքննության ավարտի մասին հայտնվել և գործի նյութերին մեղադրյալին ու նրա պաշտպանին ծանոթացվել է ----- 08.11.-----թ. մինչև 15.11.-----թ.

6. Մեղադրական եզրակացություն կազմվել է yyy թվականին:

X քննչական բաժնի ավագ քննիչ՝ ----- Ս.Ա.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Դատավարության ընթացքը

Կարևորելով ատենակալների դերը՝ ցանկանում եմ ողջունել ձեզ և շնորհակալության հայտնել ձեր աշխատանքի համար: Ստորև նկարագրելու եմ, թե ինչպես է դատավարությունն ընթանալու և բացատրելու եմ, թե որն է ձեր, իրավաբանների և իմ դերը լինելու:

Դատավարության ժամանակ առաջին հերթին դատախազը բացման խոսք է ասում: Պաշտպանության կողմն այնուհետև կարող է ևս բացման խոսք ասել: Բացման խոսքի նպատակն է ներկայացնել կողմերի ակնկալիքները ներկայացվելիք ապացույցներից:

Այնուհետև, դատախազը ներկայացնում է իր ապացույցները: Այդ ապացույցների շարքին, որպես կանոն, պատկանում են վկաների ցուցմունքները և իրեղեն ապացույցները: Դատախազի կողմից իր ապացույցները ներկայացնելուց հետո պաշտպանության կողմը ևս կարող է ապացույցներ ներկայացնել, սակայն դա պարտադիր չէ: Քանի որ մեղադրյալն անմեղ է համարվում, ապա նա պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

Ապացույցները, փաստարկները և հրահանգները լսելուց հետո դուք կանցնեք ատենակալների սենյակ՝ որոշում կայացնելու:

1. Զգուշացումներ: Ատենակալների վարքագիծը

Այժմ կբացատրեմ օրենսդրական և դատավարական մի քանի հիմնական կանոններ:

Ատենակալները կարող են միասին քննարկել գործը միայն այն ժամանակ, երբ բոլոր ապացույցները ներկայացվել են, կողմերն ավարտել են իրենց փաստարկները և ես ձեզ ցուցումներ եմ տվել օրենքի վերաբերյալ: Այն բանից հետո, երբ ես ձեզ ասեմ, որ կարող եք սկսել գործի քննարկումը, դուք դա կարող եք անել միայն ատենակալների սենյակում և միայն այն ժամանակ, երբ բոլոր ատենակալները ներկա են:

Դատական նիստի ժամանակ մի խոսեք դատավարության որևէ կողմի, վկայի կամ իրավաբանի հետ: Մի լսեք որևէ մեկին, ով փորձում է խոսել ձեզ հետ գործի, մեղադրող կողմի կամ գործի հետ կապված որևէ թեմայի մասին:

Արդարամիտ եղեք դատավարության ընթացքում: Վճռի կամ այլ հարցի վերաբերյալ որոշում մի կայացրեք, քանի դեռ գործը չէք քննարկել մյուս ատենակալների հետ:

Մի թույլ տվեք, որ կողմնակալությունը, կարեկցանքը, նախապաշարմունքը կամ հասարակական կարծիքն ազդի ձեր որոշման վրա:

2. Ապացույցներ

Դուք պետք է որոշեք, թե որոնք են գործի փաստերը: Դուք պետք է օգտվեք միայն այն ապացույցներից, որոնք ներկայացվել են դատարանում: Ապացույց են համարվում վկաների ցուցմունքները, որպես ապացույց ճանաչված իրեղեն ապացույցները և այն բաները, որոնք ես ձեզ կասեմ, որ ընդունեք որպես ապացույց:

Իրավաբանների ասած որևէ բան ապացույց չի կարող համարվել: Իրենց բացման խոսքում կամ դատական վիճաբանությունների փուլում ներկայացված ճառում իրավաբանները քննարկելու են գործը, սակայն նրանց դիտարկումներն ապացույց չեն համարվում: Նրանց հարցերը ևս ապացույց չեն: Միայն վկաների տված պատասխաններն են ապացույց համարվում:

Դատավարության ընթացքում իրավաբանները կարող են առարկել վկային տրված հարցերին: Ես որոշում կկայացնեմ առարկությունների վերաբերյալ օրենքի համաձայն: Եթե ես բավարարեմ առարկությունը, հետևաբար վկային չի թույլատրվի պատասխանել հարցին, և դուք պետք է հանեք հարցը:

3. Վկաները

Դուք ինքներդ պետք է որոշեք վկայի արժանահավատությունը: Ցուցմունքի ճիշտ լինելը որոշելիս օգտվեք ձեր բանականությունից և փորձից: Ցուրաքանչյուր վկայի ցուցմունքը պետք է գնահատվի միևնույն չափանիշի հիման վրա: Պետք է մի կողմ դնեք բոլորի տեսակի կողմնակալությունը կամ նախապաշարմունքը, ներառյալ այնպիսիք, որոնք կապված են վկայի սեռի, ռասայի, կրոնի կամ ազգային ծագման հետ: Դուք կարող եք հավատալ վկայի ողջ ցուցմունքին, դրա մի մասին կամ ընդհանրապես չհավատալ դրան:

Վկայի ցուցմունքը գնահատելիս կարող եք հաշվի առնել ցանկացած բան, ինչը ողջամտորեն միտված է ապացուցել ճշմարտությունը կամ ցուցմունքի ճշգրիտ լինելը կամ հակառակը: Այս հարցում կարող եք հաշվի առնել հետևյալ գործոնները՝

- Որքանո՞վ է վկան ընդունակ տեսնել, լսել կամ ընկալել այն ամենը, ինչի մասին նա ցուցմունք է տալիս:
- Որքանո՞վ է վկան ընդունակ հիշել և նկարագրել տեղի ունեցածը:
- Ցուցմունք տալիս ինչպիսի՞ վարքագիծ է դրսևորում վկան:
- Արդյո՞ք վկան հասկանում է հարցերը և ուղիղ պատասխանում դրանց:
- Արդյո՞ք վկայի ցուցմունքի վրա ազդել են այնպիսի գործոններ, ինչպիսիք են կողմնակալությունը, նախապաշարմունքը, գործում ներգրավված անձի հետ ունեցած անձնական հարաբերությունները կամ գործի ելքով պայմանավորված անձնական շահագրգռվածությունը:
- Ի՞նչ վերաբերմունք ունի վկան գործի նկատմամբ կամ ցուցմունք տալու նկատմամբ:

- Նախկինում վկան ցուցմունք տվել է արդյոք, որը համապատասխանում է կամ չի համապատասխանում դատարանում տված իր ցուցմունքին:
- Որքանով է ողջամիտ վկայի ցուցմունքը գործում առկա մյուս բոլոր ապացույցների լույսի ներքո:
- Արդյո՞ք որևէ ապացույց ապացուցում կամ հերքում է որևէ փաստ, որի վերաբերյալ վկան ցուցմունք է տվել:

Մեխանիկորեն մի հերքեք ցուցմունքը միայն դրա մեջ անհամապատասխանություններ և հակասություններ լինելու պատճառով: Քննարկեք, թե արդյոք տարբերությունները կարևոր են, թե ոչ: Եթե որոշում եք, որ վկան դիտավորյալ ստել է գործում առկա որևէ էական հանգամանքի վերաբերյալ, ապա մի հավատացեք նրա ասած որևէ բանին: Կամ, եթե ձեր կարծիքով վկան որոշ հանգամանքների վերաբերյալ ստել է, սակայն մյուսների մասով ճշմարտությունն է ասել, ապա պարզապես ընդունելի համարեք այն մասը, որը ըստ ձեզ ճիշտ է և անտեսեք մնացած տեղեկությունները:

4. Ատենակալների կողմից տրվող հարցերը

Եթե դատավարության ընթացքում դուք հարց ունեք վկային, ապա կարող եք այն գրի առնել և կարգադրիչի միջոցով փոխանցել ինձ: Ես այդ հարցը կքննարկեմ իրավաբանների հետ և կորոշենք, թե արդյոք այդ հարցը կարելի է տալ: Ձեր հարցը կարող է չտրվել տարբեր պատճառներով, օրինակ՝ երբ այն պահանջում է մի պատասխան, որն իրավական տեսանկյունից անընդունելի է:

6. Մեղադրանքը

Ներքևի հրահանգները վիճաբանություններից հետո կարդալ ատենակալների համար

7. Մինչև խորհրդակցական սենյակ գնալը

Երբ հեռանում եք ատենակալների սենյակ, առաջին հերթին պետք է ղեկավար ընտրեք: Ղեկավարը պետք է հետևի, որպեսզի քննարկումները կազմակերպված ձևով ընթանան, և որ բոլորն արտահայտվելու հավասար հնարավորություն ունենան:

Ձեր պարտականությունն է միմյանց հետ զրուցել և քննարկում ծավալել ատենակալների սենյակում: Պետք է փորձեք համաձայնության գալ դատավճռի շուրջ: Ձեզանից յուրաքանչյուրը պարտավոր է ինքը որոշում կայացնել գործի վերաբերյալ միայն այն բանից հետո, երբ ապացույցները քննարկեք մյուս ատենակալների հետ: Մի վախեցեք փոխել ձեր որոշումը, եթե համոզվում եք, որ սխալ եք: Սակայն մի փոխեք ձեր որոշումը միայն որովհետև մյուս ատենակալները չեն համաձայնվում ձեզ հետ:

Արդարամիտ եղեք և ազատ փոխանակեք այս գործի վերաբերյալ ունեցած ձեր մտքերն ու գաղափարները: Հենց սկզբից չափազանց խիստ կարծիք արտահայտելը կամ անմիջապես հայտարարելը, թե ինչպես եք պատրաստվում քվեարկել, կարող է խանգարել ազատ քննարկում

ծավալելուն: Խնդրում եմ հարգանքով վերաբերվեք միմյանց: Ձեր գործն է անաչառ դատավոր լինել, այլ ոչ թե հանդես գալ որպես մի կամ կյուս կողմի պաշտպանը:

Ձեր դատավճիռը պետք է միաձայն լինի: Սա նշանակում է, որ դատավճիռ կայացնելու համար դուք բոլորդ պետք է համաձայն լինեք դրա հետ: Ես իրավունք չունեմ ձեզ ասել, թե ինչ դատավճիռ կայացնեք: Իմ ասածը կամ գործողությունները մի ընդունեք որպես փաստերի, վկաների կամ ձեր վճռի վերաբերյալ ունեցած ակնարկ:

Երբ բոլոր ատենակալները համաձայնության են գալիս դատավճռի վերաբերյալ, դեկավարը պետք է կարգադրիչի միջոցով տեղեկացնի այդ մասին: Այնուհետև ես ձեզ կհրավիրեմ նիստերի դահլիճ՝ վճիռը հրապարակելու:

8. ՂԱՏԱՎՃԻՐ ԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 365. Մեղադրական դատավճիռը

1. Մեղադրական դատավճիռը բովանդակում է հանցանքի կատարման մեջ ամբաստանյալին մեղավոր ճանաչելու և նրա նկատմամբ քրեական պատիժ կիրառելու, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ քրեական պատիժ չկիրառելու կամ պատժից ազատելու մասին դատարանի որոշումը:

2. Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, դեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ:

Հոդված 366. Արդարացման դատավճիռը

1. Արդարացման դատավճիռը ճանաչում և հռչակում է հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ:

2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:

3. Եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը:

4. Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ

Երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատախազին դատավորի կողմից կատարվելիք քայլերի ուղեցույց

- Երդվյալ ատենակալների թեկնածուների խմբին հրավիրեք դատական նիստերի դահլիճ:
- Ներկայացրեք նրանց արարքը , որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը :
- Հարցրեք երդվյալ ատենակալներին՝ արդյո՞ք ճանաչում են դատական նիստերի դահլիճում ներկա գտնվողներից որևէ մեկին: Բարձրաձայն կարդացեք հնարավոր վկաների անունները և հարցրեք երդվյալ ատենակալներին՝ արդյո՞ք նրանց ծանոթ է ներկայացված անուններից որևէ մեկը:
- Ներս հրավիրեք երդվյալ ատենակալներին, որպեսզի զբաղեցնեն իրենց համար նախատեսված տեղերը:
- Կարդացեք հարցերի ցուցակը, որոնց բոլոր երդվյալ ատենակալները պետք է պատասխանեն և հետո խնդրեք երդվյալ ատենակալներից յուրաքանչյուրին պատասխանել հարցերին:

Հարցերը, որոնց երդվյալ ատենակալներից յուրաքանչյուրը պետք է պատասխանի

1. Երևանի ո՞ր հատվածում եք բնակվում:
2. Ամուսնացա՞ծ եք? Երեխաներ ունե՞ք: Քանի՞ երեխա ունեք:
3. Որտե՞ղ եք աշխատում: Ի՞նչ եք մասնագիտությամբ:
4. Երբևէ հանդես եկե՞լ եք որպես երդվյալ ատենակալ:
- 4a. Եթե այո՝ ի՞նչ գործով: Այդ գործով վճիռ կայացվե՞լ է:
5. Արդյո՞ք դուք կամ ձեր ծանոթներից որևէ մեկը եղել է հանցագործության տուժող:
- 5a. Եթե այո՝ ի՞նչ հանցագործության:
- 5b. Գործը դատարա՞ն է ուղարկվել: Հետևե՞լ եք գործի վարույթին:
- 5c. Կարծում եք արդարադատության համակարգը արդա՞ր է եղել:

- Հետո ասեք երդվյալ ատենակալներին, որ կողմերից յուրաքանչյուրին տրվում է նրանց հարցեր ուղղելու հնարավորություն, որի նպատակն է պարզել՝ արդյոք նրանք կարող են գործում արդար և անաչառ լինել:

- Այն բանից հետո, երբ կողմերից յուրաքանչյուրն ավարտի իր հարցադրումները, հարցրեք երկու կողմերին՝ արդյոք կցանկանային որևէ պատճառով գործից հեռացնել որևէ երդվյալ ատենակալի: Եթե այո՝ հրավիրեք նրանց ամբիոն և լսեք նրանց պատճառաբանությունները: Որոշեք՝ արդյո՞ք բավարարել, թե ոչ որոշակի պատճառով երդվյալներից որևէ մեկին գործից հեռացնելու վերաբերյալ կողմերի ներկայացրած միջնորդությունը:

- Հետո գալիս է անատարկելի հեռացումների ժամանակը: Յուրաքանչյուր կողմին տրվում է այդպիսի հեռացման երեք հնարավորություն: Ընդհանուր ստացվում է վեց հեռացում:

- Ընթերցում եք երդվյալ ատենակալների երդման տեքստը, այնուհետև տալիս եք նրանց հրահանգների առաջին մասը:

- Հետո դատաբնությունը պաշտոնապես սկսվում է բացման խոսքով: Խնդրեք մեղադրանքի կողմին ներկայացնել իր բացման խոսքը: Այնուհետև խնդրեք պաշտպանական կողմին ներկայացնել իր բացման խոսքը:

- Այնուհետև խնդրեք մեղադրանքի կողմին ներս հրավիրել իր առաջին վկային:

- Այն բանից հետո, երբ մեղադրանքի կողմի վկաները ավարտում են իրենց վկայությունները, մեղադրանքի կողմը հայտարարում է ավարտը: Դատավորը հարցնում է պաշտպանական կողմին՝ արդյո՞ք ունի որևէ վկա կամ արդյոք ամբաստանյալը կցանկանար ցուցմունք տալ: Դատավորը նաև հիշեցնում է ամբաստանյալին, որ նա ունի ցուցմունք չտալու իրավունք:

- Պաշտպանական կողմը հայտարարում է, որ ամբաստանյալը ցանկանում է ցուցմունք տալ:

- Ամբաստանյալի ցուցմունքից հետո պաշտպանական կողմը հայտարարում է ավարտի մասին:

- Սկսվում է դատական վիճաբանությունների փուլը: Սկզբում մեղադրանքի կողմը, հետո պաշտպանական, այնուհետև նորից մեղադրանքի և հետո պաշտպանական կողմերը ներկայացնում են իրենց վերջին փաստարկները:

- Ընթերցեք երդվյալ ատենակալներին նրանց համար նախատեսված հրահանգները և խնդրեք հեռանալ խորհրդակցական սենյակ խորհրդակցելու և դատավճիռ կայացնելու նպատակով:

-Երդվյալ ատենակալները հայտարարում են, որ կայացրել են դատավճիռը: Նրանք գալիս են դատական նիստերի դահլիճ և տալիս գրավոր դատավճիռը դատավորին, ով հրապարակում է այն:

- Վճռի հրապարակումից հետո շնորհակալություն հայտնեք երդվյալ ատենակալներին իրենց քաղաքացիական պարտքը կատարելու համար և ասացեք նրանց, որ այժմ նրանք կարող են հեռանալ, կարող են ազատ քննարկել գործը ում հետ որ ցանկանում են:

- Եթե մեղադրական դատավճիռ չի կայացվել, ասացեք ամբաստանյալին, որ նա անմեղ է ճանաչվել և ազատ է, կարող է հեռանալ:

